

беждает соперника”, “Путин в госпитале с ранеными бойцами” и т.д. Как правило, политические конфликты в прессе обязательно сопровождаются фотохроникой событий.

С другой стороны, часть политической информации в СМИ представляет собой символический капитал в обильном вербальном сопровождении, которое предварительно задается скрытым, безличным, или, наоборот, персонифицированным, ярко политизированным комментатором а la С. Доренко. В этом случае семантический контекст эстетической информации определяет приближенные к однозначности рамки восприятия таковой зрителем. Такой вариант “думать за зрителя”, по-видимому, более оправдан, чем предыдущий (“вообще не думать”), особенно если учесть следующие слова С.А. Ушакина: “Специфика эмоциональной реакции заключается в ее недолговечности; в случае отсутствия рационального “противовеса” она эффективна лишь при постоянном воздействии на слушателя/зрителя” [9, с. 144]. Помимо того, любая политизированная эстетика в СМИ может при неоднократном повторении постепенно утратить первоначальную убедительность и даже начнет приобретать обратный смысл согласно эффекту “приедаемости рекламы”.

Таким образом, особенности современного политического обоснования, как и политической аргументации вообще, создают необходимость особого восприятия и оценки этих процессов в системе политической науки и политической деятельности.

ЛИТЕРАТУРА

- [1] Брутян Г.А. Аргументация. Ереван, 1984.
- [2] Брутян Г.А. Очерк теории аргументации. Ереван, 1992.
- [3] Амирханян А. Экспликация понятия обоснования. Ереван, 1993.
- [4] Зак Л.А. Западная дипломатия и внешнеполитические стереотипы. М., 1976.
- [5] Казаков Ю. ТВ как голос гражданского общества. – Политическая сила телевидения: реальность мифа? (Обзор семинара). ПОЛИС, 1999, 6, с.155-178.
- [6] Почепцов Г.Г. Асимметричность информационных воздействий. – Вест. МГУ, сер. 18. Социология и политология, 1999, 3, с. 193-204.
- [7] Поцелуев С.П. Символическая политика: конstellация понятий для подхода к проблеме. ПОЛИС, 1999, 5, с.62-75.
- [8] Dittler A. Die Inszenierung politischer Mythen. Ein Beitrag zur Funktion der symbolischen Formen in der Politik am Beispiel des Hermannsmythos in Deutschland. – Politische Vierteljahresschrift, 1993, 34 Jahrgang, Heft 2, S. 199-218.
- [9] Ушакин С.А. Речь как политическое действие. ПОЛИС, 1995, 5, с. 142-153.
- [10] Klaus G. Sprache der Politik. Berlin, 1971.
- [11] Кассирер Э. Техника современных политических мифов. – Вестник МГУ, сер. 18. Социология и политология, 1990, 3, с. 58-69.
- [12] Оганесян С.Г. Аргументация, ее предметная область и возможности. – Автореф. ... докт. дис. Е., 1997.
- [13] Васильев В. Особенности восприятия политической информации населением. – Политическая сила телевидения: реальность мифа? (Обзор семинара). ПОЛИС, 1994, 6, с. 155-178.

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆԸ ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՇՅՈՒ ԱՇԽԱՐՀԱՅԱՅՔՈՒՄ

Մինսյան Ա.

«Հ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինտելեկտուալ»

Միջնադարյան աշխարհը կազմված էր բնորոշ սիմվոլիստական մտածողության լիարժեք համայնուց՝ Հովհան Որոտնեցու (XIV դ.) աշխարհայացքում գեղագիտականը ինքնանպատակ չէ, այն խորհրդանշան է Արարչի հզորությունը, բարությունն ու ինտուիցիան: Միջնադարյան այս մտածող առաջադրում է Աստծո գոյության «գեղագիտական փաստարկ»: Մարդու (ինչպես նաև բնության) ստեղծագործությունները բն. կատարելությանը զիջում են ստատիստիկ արարմանը, սակայն իրենց հերքին վկայում են մարդկային հոգու արարչի էության, բանական և անճիշտան լինելու մասին:

Минасян А. Эстетическое в мировоззрении Иоанна Воротнецки. Созвучно с символистским мышлением, свойственным в целом средневековому миропониманию, эстетическое в мировоззрении Иоанна Воротнецки (14 в.) не самоцельно, а выражает мудрость, доброту и могущество Творца. Средневековый армянский мыслитель выдвигает специфический “эстетический аргумент” существования Бога. Несмотря на то, что произведение человека (а также природы) своим совершенством уступают божественному творению, тем не менее они свидетельствуют о творческой сущности человеческой души, о ее разумности и свободе воли.

Minasian A. The aesthetic principles in Hovhan Vorotnetsi's world-view. According to the symbolic thinking being characteristic of the medieval mentality, the aesthetic principles in Hovhan Vorotnetsi's world-view are not commonly an end itself but symbolize Creator's wisdom, kindness and power. The XIV cent. medieval Armenian thinker put forward an “aesthetic argument” of God's existence. The results of human /and Nature's/ activities, although surpassed by the Divine creation in terms of perfection, still testify to creative essence of human soul, to its being reasonable and possessing self-will.

Հայ միջնադարյան մշակույթում իր մանկավարժական և եկեղեցական բեղուն գործունեությանը ու փիլիսոփայական հարուստ ժառանգությանը աչքի ընկնող մտածողներից է Հովհան Որոտնեցին (1315-1388): Տաթևի դպրոցի հիմնադիրը (1373թ.) մեծաթիվ աշխատությունների հեղինակ է, որոնցում արծարծվում են ինչպես հոգևոր-աստվածաբանական բնույթի, այնպես էլ գոյարանական, իմացաբանական, տրամաբանական, հոգեբանական, գեղագիտական, բարոյագիտական և մանկավարժական կարևորագույն հիմնահարցեր:

Գեղագիտությունը Հովհան Որոտնեցին չի առանձնացնում որպես ուսումնասիրության հատուկ բնագավառ (պատահական չէ, որ նա գեղագիտական հիմնախնդիրներին նվիրված առանձին աշխատություն չունի) բայց, այնուամենայնիվ, գեղագիտականը գործառու է նրա աշխարհայացքի բազմազան դրսևորում: Այս երևույթը, որն, ի դեպ, բավականին տարածված էր միջնադարում, ունի իր բացատրություններ: Միջնադարյան աշխարհը կազմված էր մանկավարժական առանձնահատկություններից է սիմվոլիստական մտածելակերպով, համաձայն որի զգայական աշխարհին հատուկ օրինաչափությունը, կարգը, կատարելությունը, գեղեցկությունը և այլն, իրենց բնույթով գեղագիտական բնութագրիչներ են, ինքնանպատակ չեն և վկայում, խորհրդանշան են Արարչի հզորությունը, բա-

բությունն ու իմաստութիւնը: Գեղագիտականի դերի նման ըմբռնունը լիովին բնորոշ է նաև Հովհան Ռոբտնեցու աշխարհայացքին: Այդ իսկ պատճառով գեղագիտականը հայ մտածողի համար միջոց է դառնում միջնադարյան աստվածաբանության գերխնդրի լուծման (Աստու գոյութեան և նրա ատրիբուտների բացահայտման) համար և, քնակամարար, գործառնում է Ռոբտնեցու աշխարհայացքի գրեթէ բոլոր բնագավառներում:

Համաձայն Հովհան Ռոբտնեցու գոյարանական ուսմունքի աշխարհն Աստու արարչագործության արդյունքն է. Աստված ստեղծել է աշխարհը ոչնչից: Թեև գերագույն արարիչը Աստված է, սակայն ստեղծել կարող են նաև բնութիւնը և մարդը՝ շնորհիվ արհեստի (արվեստի): Մարդկային ստեղծագործությունն անհնարին է առանց «հիման», այսինքն՝ նյութի, որին մարդը տալիս է «ձև պատահական»: «Իսկ բնութիւն առաւել ունի գորութիւն, քան զարհեստն», քանի որ այն ստեղծում է անմիջականորեն Աստու կողմից արարված պարզ նյութի հիման վրա, որին հաղորդում է «ոչ միայն ձև պատահական, այլև գոտեսկ գոյացական»: Այս երկուսին գերագնացում է աստվածային արարումը, որն «հինքն ստեղծանէ զհիմն և տայ նմա զձև արհեստական և գոտեսկ գոյացական» [1]:

Համեմատելով մարդկային և աստվածային ստեղծագործությունները՝ Ռոբտնեցին գտնում է, որ մարդուն ստեղծագործելու համար հարկավոր են նյութ, ժամանակ, անհրաժեշտություն, ուսում և աշխատանք: Ի տարբերություն աստվածայինի, մարդկային «գործը» «շօշախմամբ և ըմբռնելով է», այն «մախ գորութեամբ և յետոյ ներգործութեամբ եղանի», մարդը «սխալակաւն է ի յարուեստ և ի գործ», «մարդ զինչ և կամի՝ ոչ կարէ» և, վերջապես, «մարդ յետ ստեղծանելոյն՝ ոչ է ընդ ստեղծութեան իւր» [2]:

Ինչ վերաբերում է բնութեան ստեղծագործությանը, ապա, համաձայն Ռոբտնեցու հայեցակարգի, «Աստուած գերկորդարար ստեղծումն էլ ի բնութիւնս և բնութիւնս արուեստիս իւրով ստեղծանէ գոտեսկն» [3]: Քանի որ Աստված իր արարածներին ստեղծում է կատարյալ, ապա մարդկային մարմնի զանազան թերությունները և շեղումները արդյունքն են բնութեան տկարության և սխալի: Ռոբտնեցու մտորումների տրամաբանական արդյունքը հետևյալ եզրակացությունն է. «Աստուած, զի աղբիւր է հանճարոյ, ստոյգ չափով բառական ստնէ զգործս ամենեցուն՝ գովելի առաւել, քան զգործ բնութեան և քան զգործ արուեստի» [4]:

Այսպիսով, համաձայն գեղեցիկի որոտնեցիական գոյարանական ուսմունքի, զգայական աշխարհին հատուկ գեղեցկության, կատարելության և կարգի հիմքն ու արդյուրը Աստված է՝ շնորհիվ իր անսպառ և ամենակարող ստեղծագործ ուժի: Դրսևորելով գեղեցիկի օբյեկտիվ իդեալիստական ըմբռնում՝ Ռոբտնեցին գտնում է, որ այն մախ գոյություն ունի Աստու բանականության մեջ, և ապա միայն՝ նրա արարած աշխարհում: Մակայն այդ աշխարհում գեղեցիկն ու կատարյալը, կարգն ու դասավորությունն այնչափ հաստատուն և հիմնարար տեղ են գրավում, որ իրենց հերթին ապացուցում են Աստու գոյությունը. «Չարդ, չափ, և ձև, և դասութիւն արարածոցս յայտնապէս նշանակեն զճարտարապետն տրա. որպէս յերկիրս ծաղկոք, և երկինս աստեղոք, և ի մասանց կազմութեանց երկնի և երկրի... Յայսմանէ հաստատապէս երկի յերկնի արարածոցս աներևոյթն՝ Աստուած» [5]: Այսինքն՝ արարածների կարգավորված լինելը, դրանց կազմվածքի համամասնությունն ու չափը, ձևի կատարելությունը, զարդով ու գույնով օժտված լինելը և այլ գեղագիտական բնութագրիչներ ակներևարար վկայում են իրենց աներևոյթ Արարչի գոյության և ստեղծագործ անսպառ հնարավորությունների մասին: Հիրավի, մենք գործ ունենք Աստու գոյության «գեղագիտական փաստարկի» հետ: Ելնելով «յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է արվեստի ավյալ ստեղծագործությունից ճանաչել և դրա ստեղծողին (արվեստագետին)» իր որդեգրած սկզբունքից՝ Հովհան Ռոբտնեցին աստվածային նախախնամության գոյությունն ապացուցելիս ևս աշխատեցնում է մեզ ծանոթ «գեղագիտական փաստարկ» [6]:

Մնցնելով Հովհան Ռոբտնեցու իմացաբանությանը և դրանում գեղագիտականի ունեցած դերի հարցի բնութեանը՝ հարկ ենք համարում նշել, որ միջնադարյան հայ մտածողը մեծ և անթաքայց հավատ ունի մարդու ճանաչողական հնարավորությունների նկատմամբ: Ըստ Ռոբտնեցու, Աստու արարչագործության շնորհիվ ստեղծված աշխարհը, որ գոյություն ունի անկախ մարդկային որևէ զգայությունից ու մտքից՝ լիովին ճանաչելի է և իմանալի. «Ձի ոչինչ մնացէ ի գոյիցս արտաքոյ մարդկան գիտութեան» [7]: Օժտված լինելով արտաքին (տեսողություն, լսողություն, շոշափելիք, հոտոտելիք և համի զգայություն) և ներքին (ընդհանուր զգայություն, երևակայություն, կարծիք, տրամախոտություն և միտք) գորություններով՝ մարդն ի գործ է ճանաչել ոչ միայն եզակի ու մասնավոր իրերն ու երևույթները, այլ նաև ընդհանուր, որին, իր չափավոր ռեալիստական դիրքորոշման համաձայն, Ռոբտնեցին տալիս է նաև գոյարանական կարգավիճակ:

Շարունակելով ու զարգացնելով Դավիթ Անհաղթի այն տեսակետը, որ «արհեստ է ընդհանուր գիտութիւն հանդերձ պատճառաւ»՝ Հովհան Ռոբտնեցին գտնում է, որ մարդը ճանաչում է ընդհանուրը ոչ միայն գիտության, այլ նաև արվեստի միջոցով: Ռոբտնեցին սերտ կապ է տեսնում ուսման, կրթության և մարդկային «գործի» միջև, ընդ որում «գործ» ասելով նա հասկանում է թե մարդու ստեղծագործ աշխատանքը՝ արհեստը ու արվեստը, թե նրա բարոյական վարքն ու արարքները, թե մարդու մտավոր արտադրանքը և թե նրա ամենօրյա գործը՝ կենցաղը: Ինչ վերաբերում է արվեստին, ապա այն, և այստեղ Ռոբտնեցին լիովին համաձայն է անհետական տեսակետին, ինչպես և գիտությունը, ճանաչում, մտահասում է ընդհանուրը. «Ձի արժանի եղև մարդս բանի և ուսմանը լինել տեսող գործոցս Աստուածոյ, զի ոչ այլ ինչ են տեսածք արուեստից, եթե ոչ ընդհանրից իրաց հաստն, որպէս երաժշտականն և այլն: Երկուսն է տեսութիւն մտացն և հանճարն ընդհանուրն տեսանէ, գոր Աստուած յառաջագոյն գործեաց մտաք» [8]: Կարծում ենք, ասված է միանգամայն միանշանակորեն. արվեստը և գիտությունը՝ ճանաչում են ընդհանուրը, այն ընդհանուրը, որ նախապես գոյություն ունի աստվածային բանականության մեջ և ապա, արարչագործության շնորհիվ՝ նաև իրական աշխարհում:

Արվեստը, Ռոբտնեցու պատկերացմամբ, ոչ այլ ինչ է, եթե ոչ «ծնունդ գեղեցիկ յբնոյի ծնողէ խոհակաութեան»: Իր բնույթով լինելով արարչի և արարչակից Աստուծո՞ւ մարդը ձգտում է իր ճանաչած ընդհանուրը «ի կատարումն ածել», մարմնավորել արվեստի և արհեստի ստեղծագործություններում: Ինչպես աստվածային ստեղծագործությունը՝ աշխարհն իր կարգ ու կանոնով, դասավորվածությամբ ու գեղեցկությամբ վկայում է

